

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2012 թվականի հունիսի 28-ի թիվ 5 նիստի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՄԲԻՈՆ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 30-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով,

հաշվի առնելով, որ վերջին տարիներին ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության բաժնի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է,

նկատի ունենալով, որ համապատասխան ամբիոնի ստեղծումը կոյուրացնի միջմշակութային հաղորդակցության բաժնի սպասարկումը և կնպաստի դասավանդման որակի բարձրացմանն ու միջմշակութային կապերի ընդլայնմանը՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում ստեղծել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ